«Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--- ---------- 2025 թվականի N --------Ա

ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Համայնքային ծառայության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը՝ համաձայն սույն հրամանի հավելվածի։
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն.

ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

«Հավելված

Հայաստանի Հանրապետության կառավարության

2025 թվականի ---------- --ի N ---- որոշման

ԿԱՐԳ

ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում են համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու հետ կապված հարաբերությունները:
2. Համայնքային ծառայության պաշտոնը համարվում է ժամանակավոր թափուր՝ հետևյալ դեպքերում՝

1) հղիության և ծննդաբերության արձակուրդի.

2) մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի.

3) պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու.

4) վեց ամիսը գերազանցող ժամկետով վերապատրաստման կամ ծառայողական գործուղման մեկնելու դեպքում.

5) մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելու.

6) համայնքային ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության.

7) մեղադրյալի կարգավիճակ ունեցող համայնքային ծառայողի պաշտոնավարման՝ Հայաստանի Հանրապետության քրեական

դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածով սահմանված կարգով կասեցման.

8) դատարանի որոշմամբ համայնքային ծառայողի նկատմամբ կալանքը (այդ թվում՝ տնային կալանքը) որպես խափանման միջոց կիրառելու դեպքում վերջինիս լիազորությունների կասեցման.

9) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

3. Համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը սույն կարգով նախատեսված դեպքերում կարող է զբաղեցվել՝

1) տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող համայնքային ծառայողի կողմից ՝ մինչև 6 ամիս ժամկետով.

2) տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող համայնքային ծառայության կադրերի ռեզերվում (այսուհետ՝ կադրերի ռեզերվ) գրանցված անձի կողմից՝ իր համաձայնությամբ.

3) տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող մեկ այլ անձի կողմից՝ իր համաձայնությամբ:

4. Տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնը զբաղեցնող համայնքային ծառայողի փոխարինումը մեկից ավելի համայնքային ծառայողների կողմից նախատեսված լինելու դեպքում՝ նրանց փոխարինման ժամկետների հանրագումարը չպետք է գերազանցի վեց ամիսը:
5. Համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող՝ կադրերի ռեզերվում գրանցված անձի, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձի կողմից զբաղեցվում է ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու միջոցով՝ համաձայն ձևի:

Մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելու հիմքով առաջացած ժամանակավոր թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով կարող է զբաղեցվել մինչև վեց ամիս ժամկետով, որի ընթացքում պետք է հայտարարվի մրցույթ տվյալ թափուր պաշտոնը համալրելու նպատակով, որը պետք է անցկացվի մինչև վեցամսյա ժամկետի լրանալը:

Վեցամսյա ժամկետում տվյալ թափուր պաշտոնը մրցութային կարգով չհամալրվելու դեպքում՝ ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոնը զբաղեցնող անձի հետ կնքված պայմանագիրը լուծվում է: Նշված պաշտոնը հետագայում կարող է համալրվել միայն մրցութային կարգով:

Ժամկետային աշխատանքային պայմանագրով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցրած անձը համապատասխան աշխատակազմում (Երևանի քաղաքապետարանի դեպքում՝ աշխատակազմում կամ Երևանի համապատասխան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում) կարող է համայնքային ծառայության նույն կամ այլ պաշտոն զբաղեցնել միայն

համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնելու նպատակով հայտարարված մրցույթում հաղթող ճանաչվելու դեպքում։

6. Ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում, տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը գրավոր դիմում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին (այսուհետ՝ լիազորված մարմին)՝ տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող սույն կարգով նախապատվություն ստացած՝ կադրերի ռեզերվում գրանցված անձի մասին տեղեկատվություն ստանալու և նրա հետ պայմանագիր կնքելու համար։

Նշված դիմումը լիազոր մարմին կարող է ներկայացվել միայն այն պաշտոնների մասով, որոնց համալրման համար մրցույթները դեռևս հայտարարված չեն։

7. Սույն կարգի 6-րդ կետով նախատեսված դեպքում գրավոր դիմումը ստանալուց հետո լիազորված մարմինը 7 աշխատանքային օրում առնվազն իր կայքէջում հրապարակում է հայտարարություն՝ կադրերի ռեզերվում գրանցված անձանց կողմից համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար դիմում ներկայացնելու նպատակով։
8. Հայտարարության մեջ պետք է ընդգրկվեն առնվազն հետևյալ տվյալները.

1) համապատասխան համայնքի անվանումը.

2) համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնի անվանումը և տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.

3) համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնի անձնագրով այդ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջները.

4) համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքը կամ դրա վերացման ժամկետը.

5) դիմումները ներկայացնելու վերջնաժամկետը, որը պետք է լինի տվյալ հայտարարության հրապարակմանը հաջորդող հինգերորդ աշխատանքային օրը.

6) լիազորված մարմնի գտնվելու վայրը և համապատասխան հեռախոսահամարը։

9. Սույն կարգի 8-րդ կետով նախատեսված հայտարարության հիման վրա ներկայացված դիմումներից նախապատվությունը տրվում է տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող՝ համապատասխան համայնքում (Երևանի քաղաքապետարանի դեպքում՝ Երևան

քաղաքում), իսկ դրա բացակայության դեպքում՝ համապատասխան մարզի մյուս համայնքներում, Երևանի քաղաքապետարանի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում հաշվառված անձանց:

10. Մեկից ավելի անձանց կողմից դիմում ներկայացվելու դեպքում՝ նախապատվության իրավունքը տրվում է տվյալ համայնքի աշխատակազմի հաստիքների կրճատման հիմքով պաշտոնից ազատված և կադրերի ռեզերվում գրանցված անձին, այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում՝ հանրային ծառայության առավել երկար ստաժ ունեցող անձին, այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում՝ առավել բարձր համայնքային ծառայության դասային աստիճան կամ դրան համապատասխանող՝ պետական ծառայության դասային աստիճան (կոչում) ունեցող անձին, այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում՝ տվյալ աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար կազմակերպված մրցույթում հաղթող ճանաչվելու և պաշտոնում չնշանակվելու հիմքով կադրերի ռեզերվում գրանցված անձին, այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում՝ կադրերի ռեզերվում առավել երկար ժամկետով գտնվող անձին:
11. Տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող, սակայն տվյալ մարզի համայնքներում չհաշվառված ՝ կադրերի ռեզերվում գրանցված մեկից ավելի անձանց կողմից դիմում ներկայացված լինելու դեպքում՝ նրանց նախապատվության իրավունքը տրվում է սույն կարգի 10-րդ կետով սահմանված կարգով:
12. Լիազորված մարմինը սույն կարգի 9-րդ և (կամ) 10-րդ կետերով սահմանված կարգով նախապատվություն ստացած անձի մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:
13. Լիազորված մարմինը սույն կարգի 9-րդ և (կամ) 10-րդ կետերով սահմանված կարգով նախապատվություն ստացած անձին դրա մասին հայտնում է սույն կարգի 12-րդ կետում նշված տեղեկացման օրը:
14. Տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող՝ կադրերի ռեզերվում գրանցված անձի կողմից դիմում չներկայացնելու կամ դիմում ներկայացրած կադրերի ռեզերվում գրանցված անձի կողմից տվյալ պաշտոնի անձնագրի պահանջների չբավարարման դեպքում լիազորված մարմինը դրա մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:
15. Սույն կարգի 12-րդ կետով նախատեսված տեղեկությունը ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում սույն կարգի 9-րդ և (կամ) 10-րդ կետերով սահմանված կարգով նախապատվություն ստացած անձի համապատասխան՝ աշխատակազմ չներկայանալու կամ ներկայանալուց հետո պայմանագիր չկնքելու (դրա մասին համապատասխան համայնքի ղեկավարը պարտավոր է 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել լիազորված մարմին), ինչպես նաև սույն կարգի 14-րդ կետով նախատեսված դեպքերում համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում

նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող այլ անձի հետ կնքել պայմանագիր՝ հաշվի առնելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 11-րդ, 12-րդ, 24-րդ հոդվածի և 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Կադրերի ռեզերվում գրանցված և նախապատվություն ստացած անձի 3 անգամ Հայաստանի Հանրապետության մարզերի կամ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ չներկայանալու կամ ներկայանալուց հետո 3 անգամ պայմանագիր չկնքելու վերաբերյալ համապատասխան համայնքի աշխատակազմից տեղեկատվություն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում լիազորված մարմնի գլխավոր քարտուղարի հրամանով նշված անձը դուրս է գալիս կադրերի ռեզերվից։

16. Չի թույլատրվում այլ անձի հետ պայմանագիր կնքել, եթե համայնքային ծառայության տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնն առաջացել է նրա՝ այդ պաշտոնից օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>>, <<գ>>, <<ե>>, <<թ>>, <<ժ>> <<ժթ>> և <<իբ>> կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով ազատվելու կամ սույն կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով պայմանագիրը լուծվելու հետևանքով, ինչպես նաև տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար կայացած մրցույթին մասնակցած, սակայն մրցույթի թեստավորման կամ հարցազրույցի փուլը չհաղթահարած անձի հետ:
17. Համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը սույն կարգի 12-րդ կետով նախատեսված տեղեկություններն ստանալուց հետո աշխատանքային 7 օրվա ընթացքում, իսկ սույն կարգի 15-րդ կետով նախատեսված դեպքերում՝ մեկամսյա ժամկետում, պայմանագիրը կնքում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի մեկ օրինակը պահվում է համապատասխան աշխատակազմում, երկրորդը՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է լիազորված մարմին, իսկ երրորդը՝ նույն օրը տրվում է այն անձին, ում հետ կնքվել է պայմանագիրը:
18. Համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից մեկամսյա ժամկետում տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող մեկ այլ անձի հետ պայմանագիր չկնքվելու և տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի հիմքը չվերանալու դեպքում (բացառությամբ՝ սույն կարգի 2-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված դեպքում) համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնն զբաղեցվում է սույն կարգով նախատեսված ընդհանուր հիմունքներով:
19. Պայմանագիրը լուծվում է՝

1) համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացման դեպքում՝ անկախ պայմանագրի գործողության ժամկետից.

2) օրենքի 33-րդ հոդվածով (բացառությամբ այդ հոդվածի 1-ին մասի <<ե>>, <<թ>>, <<ժդ>>, <<ժթ>>, <<իա>> և <<իբ>> կետերով) նախատեսված

դեպքերում.

3) սույն կարգի խախտմամբ համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու դեպքում.

4) տվյալ պաշտոնը պայմանագրով զբաղեցնող անձի կողմից նույն պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի թեստավորման կամ հարցազրույցի փուլը չհաղթահարելու դեպքում:

20. Պայմանագիրը ենթակա չէ լուծման տվյալ պաշտոնը պայմանագրով զբաղեցնող անձի անձնական դիմումի հիմքով, եթե առկա է սույն կարգով նախատեսված պայմանագրի լուծման որևէ այլ հիմք, որով և պետք է լուծվի պայմանագիրը:
21. Համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամանակահատվածում սույն կարգի 3-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված անձինք օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում և կարգով չեն կարող գործուղվել:
22. Չի թույլատրվում համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամանակահատվածում տվյալ համայնքային ծառայության պաշտոնի անձնագրում կատարել այնպիսի փոփոխություն, որը կարող է հանգեցնել տվյալ պաշտոնը պայմանագրով զբաղեցնող անձի հետ կնքված պայմանագրի լուծմանը:

ՁԵՎ

ժամկետային աշխատանքային

պայմանագիր կնքելու կարգի

ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _____

համայնք_____ _____ 20 թ.

Հայաստանի Հանրապետության
_____,

(համապատասխան համայնքի աշխատակազմի

անվանումը)

մի կողմից, ի դեմս _____(այսուհետ՝ գործատու) (պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը)

և _____

(համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող անձի (այսուհետ՝ պաշտոնակատարի) անունը, ազգանունը, հայրանունը)

_

ծնված՝ -----թ.------ ---------- -ին, հաշվառման հասցեն՝ ----------

անձնագիր կամ նույնականացման քարտ N____ տրված ___-ի կողմից՝ 20__ թ. ___ ____-ին, հանրային ծառայության համարանիշ ____, մյուս կողմից պաշտոնակատարը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Գործատուն հանձնարարում է, իսկ պաշտոնակատարն ապահովում է

_____ -ում

(համապատասխան համայնքի աշխատակազմի անվանումը)

_____-ի

(համայնքային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնի անվանումը և ծածկագիրը)

պաշտոնի անձնագրով սահմանված պահանջների ճշգրիտ և ժամանակին

կատարումը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Կողմերն ունեն <<Հանրային ծառայության մասին>> և <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված իրավունքներ և պարտականություններ:

3. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

3. Գործատուն պաշտոնակատարին վճարում է ամենամսյա աշխատավարձ _____ դրամի չափով:

(տառերով և թվերով)

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում կողմերը կրում են պատասխանատվություն՝ <<Հանրային ծառայության մասին>> և <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

5. Սույն պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև դատական կարգով:
6. Սույն պայմանագիրը լուծվում է համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նախատեսված դեպքերում:
7. Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:
8. Սույն պայմանագիրը գործում է ստորագրման պահից՝_____ ամիս (տարի) ժամկետով:
9. Սույն պայմանագրում փոփոխություններ կարող են կատարվել կողմերի միջև գրավոր համաձայնագիր կազմելու միջոցով, որը կազմում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:
10. Սույն պայմանագիրը կնքվել է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Պայմանագրի կողմերը՝

Գործատու՝ ----------
Պաշտոնակատար՝----------

(ստորագրություն)
(ստորագրություն)

Կ.Տ.>>: